Ստեփանոս կրօնաւոր, որդի Ամիր մելիքին. չորս սարկաւագներ՝ Եւաուշա, Ապուլմսեհ, Ծերուն (Թովմայի քրոջ որդին), Սքանդար։ Աւելի փոքր են իրրև դեռաբոյս պատանիներ (1435 թուին)՝ Յակոբ, Նասրատին, Մելքիսէթ, Մխիթար, Սարգիս և Յոհաննէս*։

Թովմայի ծննդեան տարին միայն մօտաւորապէս կարող ենք որոշել։ Կիրակոս Բանասէրի կենսագրականից մեզ յայտնի է, որ նա վախճանուել է խորին ծերութեան հասակում, «ի թվականութեանս Հայոց ՊՂԵ», «ի մայիսի ԺԵ, յաւուր կիրակէի Երեման Խաչին**»։ Հինգ տարի առաջ՝ «ի թվականիս մերոյ ՊՂ», Թովման մի յիշատակարանի մէջ յայտնում է, թէ գրել է «ի ծերութեան ժամանակիս»***։ Նոյն Կիրակոսի ասելով՝ վաթսուն տարի Թովման ապրել է Մեծոփայ վանքում. սորա վերան աւելացնենք մանկութեան 7—10 տարիները վանք գալուց առաջ, նորա կեանքի տևողությունը կլինի մօտաւորապէս 67—70 տարի և ծնուած 1376—1379 թուին, հակառակ Շահնազարեան Կարապետ վարդապետի, որ Թովմայի կեանքի տևողութիւնը 57 տարի է համարում†։

Թովմայի մանկութեան ամենահին յիշողութիւնը կապուած է Լանկթամուրի առաջին արշաւանքի հետ՝ ՊԼԶ(=1387) թուականին։ Բաջրերունեաց երկրի ժողովուրդը խոյս տալով նորա զօրքերից, փախչում է Տարօն։ Մեծոփայ վանքի Ստեփանոս վարդապետի և Ներսէս եպիսկոպոսի յորդորներով այս փախուստը փոխարկւում է մի մեծ ուխտագնացութեան դէպի ս. Կարապետ, որին մասնակից էր և մանուկ Թովման։ Մինչդեռ Յուսուֆի հրամանով՝ Խութայ շէխ Շարաֆը կողոպտուած ժողովրդին բռնութեամբ դէպի Մարութայ սարն էր քշում, Փիր Հասանի և Թամուրի զօրքերը հանդիպում են իրար։ Հանգամանքից օգտւում է տարագիր ժողովուրդը և փախչում դէպի ս. Կարապետ և Մուշ։ Սրանց մէջն էր և Թովման††։

Մանկութեան ուսումը Թովման ստանում է Մեծոփայ վանքում Յովհաննէս Մեծոփեցու մօտ։ Այս մասին շատ անգամ է յայտնում Թովման իւր Պատմութեան††† և յիշատակարանների մէջ†*, բայց աւելի որոշ յիշում է նորա կենսագրութեան հեղինակ Կիրակոս վարդապետը. «ի տղայութեան սնեալ և ուսեալ ի սուրբ ուխտն Մեծոփայ՝ ի դուռն տուրբ Աստուածածնին, առ ոտս վար-

---

* Նոր Նիւթեր. Ար. 761. (24)։ Փիրդ. նօտ. Հայոց 147։

** Նոր Նիւթեր. Ար. 738. 748. (1. 14)։

*** Նոր Նիւթեր. Ար. 767. (50)։

† Պատմ. Լանկթամուրայ եր. 6/5։

†† Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 21, 22. 23, 25։

††† Անդ. 55. 60. 61։

†* Նոր Նիւթեր. Ար. 754. 756. 762. (17. 19. 25)։